մասին եւ թէ թուրքերը ինչ էին արել հայերին. ''այդ բաների մասին շատ բան չգիտեմ,'' պատասխանել էր Մուստաֆան, մեղմ բայց վճռական՝ հարցը փակելով: ''Դա պատմութիւն է, պատմաբանների հետ պիտի խօսես''»: Ահա մարմնացումը թուրք աւելի զարգացած խաւի մեծամասնութեան ցուցաբերած կեցուածքի. բայց ո՞վ հեգնանք՝ արտայայտուած մէկի կողմից, որ վէպի վերջում բացայայտւում է, թէ նրա մեծմայրը հենց նոյն որբ աղջիկն էր՝ Շերմին դարձած Շուշանը, որ մեծմայրն էր նաեւ Արմանուշի: Շաֆաքի վէպը լեցուն է յանկարծակի բացայայտուող աներեւակայելի հանգոյցներով:

Փոքր թիւ է կազմում Թուրքիայում արտադրուած թրքահայութեան կենսափորձից խօսող գրականութիւնը. այդ քչերից է Քէմալ Եալչընի «Հոգիս քեզմով կը խայտայ» գործը: Դէպի անցեալը կատարած իր այս դժուարին ճամբորդութիւնով Եալչընը ցանկանում էր ճանաչել ինքն իրեն, վերագտնել ու վերարժեւորել իր ինքնութիւնը. «Սիրելի Մելինէս, միայն քեզ չէ, կ'ուզեմ նաեւ ինքզինքս ալ ճանչնալ», ասել էր: Այս ճշմարտութիւնը քչերն են փնտռել: Եալչընը իր գործով ո՞չ միայն գեղարուեստական ձեւաւորում է տուել մինչ այդմ լռեցուած պատմական յիշողութեանը, այլ նաեւ մեծապէս նպաստել է սպեղանի դնելու թրքահայ իսլամ թէ քրիստոնեայ սերունդների հոգում մխացող վէրքի վրայ: Նրանց հետ խօսելով, համբերութեամբ եւ քաջալերանքով նրանց լսելով, օգնել է գտնել բառերը մերժուած սուգը իրացնելու, արգիլուած ցաւը արտայայտելու, ցաւը ամոքելու: Այշէ Գիւլ Ալթինային տուած հարցազրոյցի ընթացքում, Ֆեթիհէ Չեթինը պատմել է մի ծեր մարդու հետ իր տեսակցութեան մասին: Մարդը խոստովանել է, որ իր մայրն էլ հայ է եղել, խօսել է